

Արդէն լուր կու տան, թէ պարսից հողին վրայ բաւական հայեր ջարդուած են քիւրդերէ:

8 Հոկտեմբեր

Թուրք կառավարութիւնն Լուսինեան վեցերորդ Լեւոն թագաւորին լուսանկար պատկերներն ժողովել տուաւ հայ գրավաճառներու խանութներէն:

Կ'ըսուի թէ զանոնք հրացանի պիտի բռնել տայ...:

Բ. Դուռն իւր խորին քաղաքագիտութեամբը համոզուած է, թէ այդ պատկերներն են Հայկական ինդիւրն յուզողները:

9 Հոկտեմբեր

Թուրք լրագիրներն պարծանօք կհրատարակեն, թէ *Պայրամի* առթիւ պաշտօնեաներուն ամսական պիտի տրուի:

Մարդս ինքնիրեն հարցունելու կստիպուի, թէ եթէ ասոնք *Պայրամ* չունենային պաշտօնեաները բնաւ ամսական չպիտի՞ առնէին...:

Ցաւալին այն է, որ տարին մէկ երկու Պայրամ ունին. միւս ամիսներն ի՞նչ կ'ուտեն պաշտօնեաները:

–Կաշա՛ռք... մանաւանդ Հայաստանի մէջ...:

10 Հոկտեմբեր

Մովը նորէն սկսաւ Հայաստանի մէջ երեւիլ:

Մովելոց մասնաժողովն այս մասին տխուր լուրեր հրատարակելով՝ ազգային օգնութիւնը կխնդրէ:

Դժբախտաբար մեր շատ մը հարուստ ազգայիններուն սրտին մէջ ալ գթութեան սով կայ. եւ երբ այս երկու սովերը իրարու հանդիպին՝ հետեւանքը գուշակելը շատ դիւրին է:

Այն հարուստներն, որք կարող են սովեալներուն յօգուտ երկու հազար ոսկի տալ՝ հազիւ տասը կամ քսան ոսկի կու տան: Կ'երեւի թէ ասոնք միջին աստիճանի մարդերէն շատ չեն ախորժիր եւ անոնց վերնալը կփափաքին աշխարհիս վրայէն, որպէս զի իրենք միայն մնան եւ հանգիստ պտըտին: Ուրիշ ի՞նչ կերպով մեկնելու է այս տեսակ հարուստներուն անհոգութիւնը...: